



HY

# Մատնահետքեր եւ Eurodac

©Stockphoto / janp013

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր ձերբակալվել են անօրինական կերպով արտաքին սահման հատելու ժամանակ՝ համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե 14 տարեկան եք կամ ավելի և ձերբակալվել եք անօրինական կերպով սահման հատելիս, ապա Ձեզնից մատնահետքեր կվերցվեն և կհանձնվեն մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ժամանակ, քանի որ օրենքով պարտավոր եք մատնահետքեր հանձնել:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Եթե ապագայում որևէ ժամանակ դիմեք ապաստանի համար, Ձեզնից կրկին մատնահետքեր կվերցվեն: Եթե ապաստանի համար դիմեք այլ երկրում, որը տարբեր է այն երկրից, որտեղ առաջին անգամ վերցվել են Ձեր մատնահետքերը, Ձեզ կարող են ուղարկել Ձեր մատնահետքերը առաջին անգամ վերցրած երկիր:

Ձեր մատնահետքերը կպահվեն 18 ամիս. 18 ամիս անց դրանք ինքնաբերաբար կջնջվեն տվյալների բազայից: Eurodac-ում պահպանվում են միայն Ձեր մատնահետքերի և գենդերային տվյալները. Ձեր անունը, լուսանկարը, ծննդյան ամսաթվի և ազգության մասին տվյալները չեն ուղարկվում տվյալների բազային և չեն պահպանվում:

Ապագայում ցանկացած ժամանակ կարող եք Ձեր մատնահետքերը վերցնող երկրից Eurodac-ում գրանցված, Ձեզ անչվող տվյալների ձեռք բերման խնդրանք ներկայացնել: Կարող եք պահանջել, որ այդ տվյալները ճշգրտվեն կամ ջնջվեն. օրինակ՝ դրանք ջնջվում են այն ժամանակ, եթե դառնում եք ԵՄ-ի կամ ասոցացված պետության քաղաքացի կամ եթե ձեռք եք բերում այդ պետություններից մեկի կեցության թույլտվություն և չեք դիմել ապաստանի համար:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք ԵՄ-ի կամ ասոցացված այլ պետությունում<sup>1)</sup>, ապա Ձեր մատնահետքերը կուղարկվեն տվյալ երկիր՝ ստուգման համար: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

---

1) **Ձեր մատնահետքերը կարող են փոխանցվել, միայն օրենքով թույլատրված կարգով, 28 ԵՄ անդամ պետությունների և 4 ասոցացված պետությունների՝ Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն, միջև:**

2015թ. հուլիսի 20-ից, Ձեր մատնահետքերը կարող են հետազոտվել ոստիկանության և Եվրոպական ոստիկանության (Եվրոպոլ) կողմից, որոնք կարող են Eurodac տվյալների բազայից օգտվելու խնդրանք ներկայացնել՝ լուրջ բնույթի հանցագործությունների և ահաբեկչության կանխարգելման, հայտնաբերման և հետաքննման նպատակներով:

## Կոնտակտային տվյալներ

Eurodac-ի վերահսկողի ինքնությունը և կոնտակտային տվյալները

### **Միգրացիայի վարչության Ներքին գործերի նախարարություն**

Լ. Սապիեգոս փողոց. 1, 10312 Վիլնյուս  
հեռ.+370 5 271 7112

Էլ. փոստ: md.rastine@vrm.lt

<http://www.migracija.lt>

Ազգային վերահսկողության մարմնի  
(Տվյալների պաշտպանության)  
կոնտակտային տվյալները

### **Պետական տվյալների պահպանության տեսչություն**

Ա. Յոզապավիչիաուս փողոց 6,  
09310 Վիլնյուս

հեռ.+370 5 271 2804, +370 5 279 1445

Էլ. փոստ: ada@ada.lt

<https://www.ada.lt>

©Եվրոպական Միություն 2014

Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:

doi:10.2847/19698

ISBN 978-92-9243-153-2

